

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## 1. Զարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

1.1 Օրենքներ -----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	2
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ-----	4

## 2. Զարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 9

2.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների -----	9
2.2 Միջազգային համագործակցություն -----	9
2.3 Ռեսուրսներ, մրցույթ -----	10
2.4 ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ -----	10
2.5 Զարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ-----	11

# 1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1 ԶՅ Օրենքներ

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» ԶՅ օրենքում լրացում կատարելու մասին» ԶՅ օրենք
Ամսաթիվը և համարը	15 ապրիլի 2011թ., ԶՕ-126-Ն
Հրապարակումը	ԶՅ պաշտոնական տեղեկագիր № 27 (830), 13.05.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ԶՅ օրենսդրությամբ սահմանված կարգով համատեղ գործունեության պայմանագրով գործող գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող սուբյեկտներից (մասնակիցներից) յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես առանձին հարկ վճարող: Համատեղ գործունեության պայմանագրով գործող սուբյեկտների (մասնակիցների) գործունեությունը համարվում է գյուղատնտեսական արտադրություն, եթե նրանց գործունեության արդյունքում արտադրված արտադրանքի 90 տոկոսը գյուղատնտեսական արտադրանք է: Այս իմաստով



գյուղատնտեսական արտադրանք է համարվում «Եկամտահարկի մասին» ԶՅ օրենքով սահմանված արտադրանքը:

## 1.2 ԶՅ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 22-ի N 844 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԶՅ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	24 մարտի 2011թ., N 423-Ն
Հրապարակումը	ԶՅ պաշտոնական տեղեկագիր № 25 (828), 04.05.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Որոշման ընդունման նպատակը 2010 թվականի դեկտեմբերի 8-ի «Լիցենզավորման մասին» ԶՅ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԶՕ-227-Ն օրենքի համապատասխան դրույթի կատարման ապահովումն է, համաձայն որի կրճատվել է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների քանակը, իսկ

մաքսային միջնորդական գործունեությունն այլևս չի համարվում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ: Կատարված փոփոխությունը պայմանավորված է 22.06.2002թ. N844 որոշմամբ հաստատված մաքսային հսկողության տարածքի կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգում ԶՅ օրենսդրությամբ



յան պահանջներին հակասող դրույթների և տնտեսավարող սուբյեկտների համար որոշակի սահմանափակման պահանջի վերացման և մեղմացման անհրաժեշտությամբ: Որոշմամբ սահմանվել է, որ մաքսային հսկողության տարածքի կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգի համաձայն ստացված լիցենզիայի հիման վրա մաքսային հսկողության տարածքի կազմակերպման իրավունք ունեն ՅՅ իրավաբանական անձինք՝ հանելով այն սահմանափակումը, համաձայն որի ՅՅ իրավաբանական անձինք ստացված լիցենզիայի հիման վրա պետք է ունենան մաքսային հսկողության տարածքի կազմակերպման իրավունք՝ բացառապես այդ գործունեության համար ստեղծված լինելու պարագայում: Որոշմամբ հստակեցվում է մաքսային հսկողության տարածքի կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը, պարզեցվում և հստակեցվում են լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների լիցենզավորման կարգերն ու լիցենզիայի ձևերը, ինչպես նաև 2010 թվականի դեկտեմբերի 8-ի «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՅՕ-227-Ն օրենքի դրույթներին համապատասխան ուժը կորցրած են ճանաչվում մաքսային միջնորդական (բրոքերային) գործունեության լիցենզավորման կարգն ու մաքսային միջնորդական (բրոքերային) գործունեության լիցենզիայի ձևը՝ նպաստելով տնտեսավարող սուբյեկտների համար առավել դյուրին պայմանների ստեղծման ապահովմանը:

ղության տարածքի կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը, պարզեցվում և հստակեցվում են լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների լիցենզավորման կարգերն ու լիցենզիայի ձևերը, ինչպես նաև 2010 թվականի դեկտեմբերի 8-ի «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՅՕ-227-Ն օրենքի դրույթներին համապատասխան ուժը կորցրած են ճանաչվում մաքսային միջնորդական (բրոքերային) գործունեության լիցենզավորման կարգն ու մաքսային միջնորդական (բրոքերային) գործունեության լիցենզիայի ձևը՝ նպաստելով տնտեսավարող սուբյեկտների համար առավել դյուրին պայմանների ստեղծման ապահովմանը:

Փաստաթուղթ	«Հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկության ձևը հաստատելու մասին» ՅՅ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	14 ապրիլի 2011թ. N 511-Ն
Հրապարակումը	ՅՅ պաշտոնական տեղեկագիր N° 26 (829), 11.05.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկության ձևը: Այս տեղեկությունը կարող է ներկայացվել էլեկտրոնային եղանակով կամ փոստի միջոցով «Հարկերի մասին» ՅՅ օրենքով սահմանված կարգով: Սահմանվում է նաև, որ արտարժույթի առք

ու վաճառքի և արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողների կողմից համակարգչային սարքավորումների կիրառման դեպքում այդ սարքավորումներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկությունը ներկայացվում է վերոնշյալ ձևով:

### 1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր հարկային պետական ծառայության պետի 2008 թվականի մարտի 21-ի N 03-Ն հրամանում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	23 մարտի 2011թ, N 665-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 9 (392), 02.05.2011թ.

#### Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվում է, որ ՀՀ-ում ոչ ռեզիդենտի վճարած հարկերի մասին տեղեկանքը ստանալու համար հարկ վճարած ոչ ռեզիդենտը կամ նրա կողմից լիազորված անձը գրավոր դիմում է հարկը պահած

հարկային գործակալի գտնվելու վայրի հարկային տեսչություն, իսկ հարկային գործակալի բացակայության դեպքում՝ Կենտրոնական գանձապետարանի հաշվառման հարկային տեսչություն:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր հարկային պետական ծառայության պետի 2006 թվականի փետրվարի 13-ի N 1-05/03-Ն հրամանում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	23 մարտի 2011թ, N 666-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 9 (392), 02.05.2011թ.

#### Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվում է, որ ՀՀ հարկային ռեզիդենտի կարգավիճակ ստանալու համար դիմողը ՀՀ հարկային ռեզիդենտի կարգավիճակի հաստատման նպատակով վերոնշյալ հրամանով սահմանված փաստաթղթերը ներկայացնում է իր հաշ-

վառման վայրի, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ բնակության (հաշվառման) վայրի հարկային տեսչություն: Վերջինս հրամանով սահմանված գրանցամատյանում կատարում է համապատասխան նշումներ և երկու աշխատանքային օրվա ընթացքում



կամ տրամադրում է տեղեկանքը՝ հաստատելով այն հարկային տեսչության կնիքով և ամրագրելով հարկային տեսչության պետի ստորագրությամբ, կամ գրավոր մերժում՝ նշելով մերժման հիմքերը:

Սահմանվում է, որ ՀՀ հարկային ռեզիդենտի կարգավիճակի հաստատման տեղեկանքը ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

**1.** | իրավաբանական անձանց դեպքում.

**ա)** օտարերկրյա պետությունում եկամուտների ստացումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները: Նման փաստաթղթերի շարքին են դասվում՝

- պայմանագիրը,
- շահաբաժինների վճարման մասին բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը,
- հիմնադիր փաստաթղթերը (օտարերկրյա պետությունում առանձնացված ստորաբաժանման բացման համար ուղղված միջոցները հարկերից ազատելու նպատակով) և այլն:

Նշված փաստաթղթերի պատճենները հաստատում են կազմակերպության կնիքով և ամրագրվում կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ.

**2.** | Հայաստանյան և օտարերկրյա ֆիզիկական անձանց դեպքում.

**ա)** օտարերկրյա պետությունում եկամուտների ստացումը հիմնավորող փաստաթղ-

թերի պատճենները: Նման փաստաթղթերի շարքին են դասվում՝

- պայմանագիրը,
- Շահաբաժինների վճարման մասին բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը և այլն.
- բ)** քաղաքացու անձնագրի բոլոր էջերի պատճենները.

**գ)** ՀՀ տարածքում անձի գտնվելու ժամանակահատվածի հաշվարկման աղյուսակը կամ ՀՀ տարածքում նրա կենսական շահերի կենտրոնի գտնվելու մասին ազատ ոճով շարադրած հիմնավորումը հաստատող փաստաթղթերի պատճենների հետ հանդերձ:

Որպես հաստատող փաստաթղթեր կարող են ծառայել՝

- տեղեկանքը բնակության վայրից,
- տեղեկանքը աշխատանքի վայրից,
- ավիատոմսերը,
- սեփականության վկայականը և այլն:

Մեկ տարուց ավելի գործողության ժամկետ ունեցող փաստաթղթերի պատճենները նախկինում ներկայացված լինելու դեպքում դրանց կրկնակի ներկայացում չի պահանջվում: Այդ դեպքում դիմումի մեջ պետք է կատարել հղում այն գրության վրա, որով նախկինում ներկայացվել է տվյալ փաստաթուղթը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցում ստացած կազմակերպությունների գրանցման մասին տեղեկությունները Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեին տրամադրելու կարգը սահմանելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	18 ապրիլի 2011թ, N 727-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 9 (392), 02.05.2011թ.

**Համառոտ նկարագիր**

Հրամանով հաստատվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցում ստացած կազմակերպությունների պետական գրանցման մասին տեղեկությունները ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին տրամադրելու կարգը: Սահմանված տե-

ղեկություններն ստացվելուց հետո նույն օրվա ընթացքում ՊԵԿ-ը Կենտրոնական բանկին առցանց ռեժիմով տրամադրում է Կազմակերպության ՀՎՀՀ-ն և հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը:

Փաստաթուղթ	«Էլեկտրոնային և (կամ) թղթային եղանակով հարկային հաշիվներ դուրս գրելու դեպքերում ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման կարգի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	04 ապրիլի 2011թ., 16 մարտի 2011թ. N 13
Հրատարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 9 (392), 02.05.2011թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ.

**1.** «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով հարկային հաշիվ դուրս գրելու պարտավորության դեպքում ԱԱՀ վճարողների կողմից ապրանքների առաքումն իրականացվում է օրենքին համապատասխան Էլեկտրոնային եղանակով կամ թղթային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների հիման վրա,

**2.** «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով հարկային հաշիվ փոխարեն այլ հաշվարկային փաստաթուղթ լրացնելու պարտավորության դեպքում ԱԱՀ վճարող-

ձին-առանձին՝ ըստ առաքման կամ տեղափոխման համար հարկային հաշիվների և հաշիվ-ապրանքգրերի լրացման հաջորդականության՝ գրանցման հերթական համարներով: Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներն օրենքով սահմանված կարգով դուրս են գրվում մինչև տնտեսավարող սուբյեկտի տարածքից ապրանքի դուրսբերումը, որոնց մասով առաքումների գրանցման գրքում գրանցումներ չեն կատարվում:

2011 թվականից սկսած, եթե ԱԱՀ-ի հաշվետու որևէ ժամանակաշրջանում (ամիս կամ եռամսյակ) ԱԱՀ վճարողի կողմից հար-



ների կողմից ապրանքների առաքումը կամ ԱԱՀ վճարողների կողմից ապրանքների տեղափոխումն իրականացվում է սահմանված կարգով լրացվող սկզբնական հաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

Ապրանքների առաքման դեպքում առաքումների գրանցման գրքում գրանցումները կատարվում են նախապես՝ մինչև տնտեսավարող սուբյեկտի տարածքից ապրանքի դուրսբերումը թղթային եղանակով դուրս գրված յուրաքանչյուր հարկային հաշիվ կամ հաշիվ-ապրանքագրի համար առան-

կային հաշիվները դուրս են գրվել (գրվում) բացառապես Էլեկտրոնային եղանակով, այդ հաշվետու ժամանակաշրջանում ԱԱՀ վճարողի վրա չեն տարածվում կարգի դրույթները՝ ապրանքների առաքման կամ տեղափոխման դեպքում առաքումների գրանցման գրքերում գրանցումներ կատարելը պարտադիր չէ:

ԱԱՀ-ի որևէ հաշվետու ժամանակաշրջանում դեռևս հարկային հաշիվներ դուրս չգրած ԱԱՀ վճարողի համար տեղափոխում-





ների դեպքում առաքումների գրանցման գրքերում գրանցումներ կատարելը պարտադիր չէ, եթե տեղափոխումների կատարումից առաջ հարկային մարմնի հետ սահմանված կարգով կնքվել է էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներ դուրս գրելու վերաբերյալ պայմանագիր:

2011 թվականից սկսած, եթե ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանում ԱԱՀ վճարողները էլեկտրոնային եղանակից բացի հարկային հաշիվներն օրենքով սահմանված կարգով դուրս են գրել նաև թղթային եղանակով, առաջին անգամ թղթային եղանակով հարկային հաշվի դուրսգրման օրվանից մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը (ներառյալ) կարգին համապատասխան առաքումների կամ տեղափոխումների իրականացման յուրաքանչյուր հասցեի առաքումների գրանցման գրքերում իրականացնում են ապրանքների առաքման կամ տեղափոխման գրանցումներ: Այս իմաստով ԱԱՀ վճարողի համար ԱԱՀ-ի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջան (ամիս կամ եռամսյակ) դիտարկվում է առանձին:

Եթե հարկային մարմինների կողմից ստուգման արդյունքում հայտնաբերվում է, որ որևէ պահից սկսած ԱԱՀ վճարող չհամարվողը համարվել է ԱԱՀ վճարող, ապա առա-

քումների գրանցման գրքերի վարման պարտավորությունն առաջանում է.

**1.** Առաքումների կամ տեղափոխումների իրականացման այն հասցեների, որոնց համար հարկային մարմնի կողմից նախկինում չեն կնքվել ու համարակարգվել առաքումների գրանցման գրքեր կամ կնքված և համարակարգված գրքերը լրացվել-ավարտվել են, առաքումների գրանցման գրքերը վարում են սահմանված կարգով հարկային մարմնի կողմից կնքված և համարակարգված առաքումների գրքերի ստացման օրվան հաջորդող օրվանից, բայց ոչ ուշ ստուգման ակտը հարկ վճարողին ներկայացվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրվանից,

**2.** Առաքումների կամ տեղափոխումների իրականացման այն հասցեների, որոնց համար հարկային մարմնի կողմից նախկինում կնքվել և համարակարգվել են առաքումների գրանցման գրքեր ու գրքերը ստուգման ակտը ներկայացնելու օրվա դրությամբ լրացված-ավարտված չեն, առաքումների գրանցման գրքերը պարտավոր են վարել ստուգման ակտը հարկ վճարողին ներկայացվելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից:

Փաստաթուղթ	«Փորձատուների կողմից վճարված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից փոխհատուցվող ժամանակավոր անաշխատունակության և թաղման նպաստների հարկային հաշվառման վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	16 մարտի 2011թ, N 14
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր №9 (392), 02.05.2011թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ եթե տվյալ ամսվա համար հաշվարկված սոցիալական վճարները բավարար չեն, ապա գործատուի կողմից իր միջոցներից օրենքով սահմանված չափերով վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստների (հիվանդության նպաստի, պրոթեզավորման նպաստի, առողջարանային բուժման նպաստի և ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստի դեպքում՝ ժամանակավոր անաշխատունակության հինգերորդ օրվանից սկսած գործատուի միջոցների հաշվին վճարված գումարների), ինչպես նաև վարձու աշխատողի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի գումարները՝

**ա.** գործատուի (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր) համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն՝ անկախ ՀՀ պետական բյուջեից փոխհատուցում ստանալու կամ չստանալու հանգամանքից,



**բ.** հետագայում ՀՀ պետական բյուջեից ստացված փոխհատուցման գումարները չեն ներառվում գործատուի (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր) համախառն եկամտի մեջ:

Փաստաթուղթ	«Վարձակալված և աշխատողին անհատույց ժամանակավոր օգտագործման հանձնված բնակարանի համար գործատուի կողմից վճարվող վարձակալական վճարների հարկման առանձնահատկությունների վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	16 մարտի 2011թ., N 15
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր N99 (392), 02.05.2011թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ այն դեպքում, երբ գործատուի և վարձու աշխատողի միջև կնքված աշխատանքային պայմանագրով ուղղակիորեն նախատեսված չէ, որ վարձու աշխատողի վարձատրությունը ներառում է նաև կազմակերպության կողմից վարձակալված և աշխատողի անհատույց ժամանակավոր օգտագործմանը հանձնված բնակարանի համար գործատուի կողմից վճարվող վարձակալական վճարները, ինչպես նաև վարձակալության պայմանագրով նախատեսված՝ էլեկտրաէներգիայի, ջրի, հեռախոսի վճարները և այլ կոմունալ ծախսերը, ապա գործատուի կողմից կատարված վերոնշյալ ծախսերից վարձավճարները համարվում են եկամտի ստացման հետ կապված անհրաժեշտ ծախսեր և չեն դիտվում

որպես վարձու աշխատողին անհատույց՝ բնամթերային (ոչ դրամական) ձևով վճարված եկամուտներ, հետևաբար՝ այդ մասով եկամտահարկով հարկման հարց չի առաջանում: Այս առումով ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 01.02.2011թ. «Կազմակերպության կողմից վարձակալված և աշխատողի ժամանակավոր օգտագործմանը հանձնված բնակարանի համար գործատուի կողմից վճարվող վարձակալական վճարների հարկման մի քանի հարցերի վերաբերյալ» N6 պաշտոնական պարզաբանման վերջին պարբերության դրույթները 2009 թվականի հունվարի 1-ից հետո կիրառելի են միայն վարձակալական պայմանագրով նախատեսված՝ էլեկտրաէներգիայի, ջրի, հեռախոսի վճարների և այլ կոմունալ ծախսերի մասով:



## 2. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

### 2.1 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

#### 2.1.1 | Գանգատարկումներ և ծառայողական քննություններ /հարկային ծառայության մասով/

20.04.2011թ-ից մինչև 18.05.2011թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկված նյութերի արդյունքում 3 մաքսային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:  
20.05.2011թ-ից մինչև 20.06.2011թ-ն ըն-

կած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են թվով 7 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որոնց արդյունքում թվով 44 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

### 2.2 | Միջազգային համագործակցություն

2011թ. մայիսի 10-ից 14-ը ք. ք.Սիեթլում (ԱՄՆ) տեղի է ունեցել ՀՄԿ և ԱՄՆ Մաքսային և Սահմանների պաշտպանության գործակալության համատեղ կազմակերպված տարեկան համաժողով-ցուցահանդեսը՝ նվիրված «Հեռակա հաշվարկներ (Cloud Computing)» Նոր դարաշրջան մաքսային համակարգերի և առևտրի համար» թեմային, որին մասնակցել են նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչները՝ ՊԵԿ նախագահ Գագիկ Խաչատրյանի գլխավորությամբ: Համաժողովի ընթացքում քննարկվել են բազմաթիվ հարցեր, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի դերն արտաքին տնտեսական գործունեության խթանման մեջ, մաքսային համակարգի օպտիմալ կառավարման և սահմանների անվտանգության ապահովում և այլն: Համաժողովին ելույթ են ունեցել ՀՄԿ գլխավոր քարտուղար Կուսիո Միկուրիան, ԱՄՆ Մաքսային և Սահմանների պաշտպանության գործակալության պետի տեղակալ Դեվիդ Ագիլարը, ԵՄ ահաբեկչության դեմ պայքարի համակարգող Գիլես դե Կերիսովեն և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք իրենց ելույթներում ներկայացրել են իրենց կողմից ղեկավարվող կառույցներում տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի զարգացումները և նորամուծությունները: Հայկական կողմը ևս ներկայացրել է ՀՀ Մաքսային համակար-



գում վերջին տարիներին իրականացված տեղեկատվական տեխնոլոգիաների բարեփոխումները, մասնավորապես, վերջերս ներդրված Էլեկտրոնային վճարման համակարգը, որը շատ բարձր է գնահատվել ներկաների կողմից՝ որպես արտաքին առևտրի զարգացման և խթանման կարևոր գործիք: Ընդունվել են մի շարք խորհրդատվական որոշումներ առ այն, թե ինչպես կարող են տեղեկատվական տեխնոլոգիաները օգտագործվել իրականացվող վարչարարություններում, միևնույն ժամանակ հետևելով հիմնական բիզնես գործառնությունների, այդ թվում ապրանքների դասակարգման, գնահատման և առօրյա հարակից մյուս առաջադրանքների կատարմանը: Առանձին աշխա-

տանքային հանդիպումներ են տեղի ունեցել «Microsoft», «Oracle» և «Well Fontaine» ընկերությունների մաքսային ոլորտի ծրագրային ապահովմամբ զբաղվող ներկայացուցիչների հետ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմի-

տեի ներկայացուցիչների կողմից ներկայացվել է ՊԵԿ մաքսային ծրագիրը սպասարկող «Trade World Manager (TWM)» ծրագիրը, որից հետո գործնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել մի շարք ընկերությունների հետ՝ կապված վերոհիշյալ ծրագրի կիրառման, զարգացման և նորացման հնարավորությունների հետ:

### 2.3 | Ուսուցում, մրցույթ

2011թ. մայիսի 16-18-ը կայացել է ՊԵԿ հարկային ծառայության թափուր պաշտոնների համալրման նպատակով հերթական մրցույթը, որին մասնակցելու դիմում էին ներկայացրել 191 քաղաքացիներ: Մրցույթի արդյունքում համալրվել է հարկային

ծառայության 26 թափուր պաշտոն: ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 05.05.2011թ. թիվ 2/448 հրամանի համաձայն 2011թ. հունիսի 14-ից անցկացվելու է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայողների ատեստացիա:

### 2.4 | ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Զափման միավոր	2011թ.		
			Մայիս	Հունվար-մայիս	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-մայիս, %)
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այդ թվում՝	մլն դրամ	67,463.7	308,262.0	110.33
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	55,271.9	249,927.8	109.84
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	28,115.8	123,196.1	112.61
1.1.2	Շահույթահարկ	մլն դրամ	8,559.2	45,324.2	119.50
1.1.3	Եկամտահարկ	մլն դրամ	7,042.9	31,136.9	110.11
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	2,007.3	8,593.4	148.89
1.1.5	Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար	մլն դրամ	1,187.9	8,119.7	102.92
1.1.6	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճար	մլն դրամ	1,733.6	8,071.7	97.35
1.1.7	Մաքսատուրք	մլն դրամ	3,848.2	13,501.2	111.51
1.1.8	Այլ հարկային եկամուտներ	մլն դրամ	2,777.1	11,984.6	67.05
1.2	Պետական տուրք	մլն դրամ	1,722.9	7,676.2	115.61
1.3	Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	մլն դրամ	10,468.8	50,658.0	112.04
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	174 360	785 096	112.1
2.1	Արտահանում	մլն դրամ	37 554	195 998	138.1
2.2	Ներմուծում	մլն դրամ	136 807	589 097	105.5

**2.5 | Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ**

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2011թ. մայիս
1	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	4256
2	Բռնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	Հունվար-մայիս 1410
2.1	Բավարարված	հատ	762
2.2	Մերժված	հատ	38
2.3	Զննության ընթացքում գտնվող	հատ	1071
3	Բռնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	2217.7
4	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	12854
4.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	227.8
5	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	1794
5.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	5695.0
6	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	49
6.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	573.7
7	ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	159
7.1	Ավարտված	հատ	20
7.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	20
7.3	Կասեցված	հատ	11
8	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	305.5



բոլոր հարցերն  
ունեն իրենց  
պատասխանները՝

**[www.taxservice.am](http://www.taxservice.am)**

**[www.customs.am](http://www.customs.am)**